

Փոխարկային քշամուքեանց հետեւանալով : Այդ պատճառաւ գացած էի պարսից Շահին մօտ եւ յաջողած էի իշխանութենէ գրկել տալ այդ հանը , եւ անոր տեղը նոր խան մը կարգել տուած էի : Քեզի լաւ ծանօթ եմ այս եւ ռարիշ նման դէպքեր , որոնք մեզի հանդիպեցան : Ի՞նչ ըսեմ , եթէ ոչ , օրհնեալ եղիցին կամք Տեառն , որ մեզ արժանի կը համարի տանջուելու . եւ այդ պատճառաւ քոյլ կուտայ որ չար սատանան ա՛յնքան եւ ա՛յնքան կերպերով մեզ ձախկէ : Բայց պարտական եմ այս ամէնը տանիլ ուրախութեամբ , որպէսզի Ողորմածն Աստուած գթայ մեզի եւ իրականացնէ մեր բաղձանկները : *Ո՛վ սիրելի զաւակս , զբաժ էիք ինձի , որ աճապարեմ Հոսմ ժամանել : Առ այդ կ'ըսեմ . արդեօք չիմա՞ պարտիմ աճապարելու սկսիլ . միթէ քսան տարիներէ ի վեր չե՞մ աճապարեր եւ չե՞մ պատրաստուիք զայդ կատարելու : Սակայն ի՛նչ ընեմ , երբ չարագլուխ սատանան ինձի կը հակառակի : Բայց կը յուսամ մեր Տիրոջմէն , Յիսուսէ Քրիստոսէ , որ ըսա՛ով որ խնդրէ պիտի գտնէ՝ թէ բարեխօսութեամբ Ս . Աստուածածնին եւ ազօրքներովք Սուրբ Քահանայապետներուն , Սեղբեստրոսի եւ Գրիգորի , պիտի ճզմեմ հակառակող սատանային գլուխը , եւ պիտի զամ համբուրելու Գլխաւոր Առաքելոց սուրբ մասունքները եւ ողջունելու Եկեղեցւոյ Կենդանի եւ սուրբ Պետր :*

Այս բալտրին համար ողջ լեր շնորհօքն Աստուծոյ Ամենակալին :